ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն – Մերի Դալլաքյան, Արուս Թումանյան, Անի Մալոյան, Վարդուհի Ասլանյան:

2. Զբաղեցրած պաշտոնը – ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները – Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Շանսի նահանգ, Թայյուան քաղաք, 03.09.2026 թ. – 07.09.2026 թ.:

4. Հրավիրող կողմը – Թայյուանի «Էներգիայի և ցածր ածխածնային զարգացման» ֆորումի կազմակերպչական կոմիտե:

5. Գործուղման նպատակները – Մասնակցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի Թայյուան քաղաքում 2026 թվականի սեպտեմբերի 4-5-ը անցկացվող Թայյուանի էներգետիկայի և ցածր ածխածնային զարգացման ֆորումին, որի 2026 թվականի խորագիրն էր՝ «Կրկնակի ածխածնային նպատակների միջոցով էներգետիկ անցման առաջնորդում, նորարարությունների միջոցով կանաչ ապագայի արագացում»:

Ֆորումը հանդիսանում է էներգետիկայի ոլորտում միջազգային բարձր մակարդակի երկխոսության, գիտատեխնիկական ձեռքբերումների ներկայացման և միջազգային համագործակցության խթանման հարթակ:

6. Քննարկված թեմաները – Ֆորումի հիմնական թեմաներն ընդգրկել են էներգետիկ անցման գործընթացները, ցածր ածխածնային զարգացմանն ուղղված մոտեցումները, կանաչ զարգացման ապահովումը, էներգետիկ ոլորտում նորարարությունների կիրառումը, ինչպես նաև նշված ուղղություններով միջազգային համագործակցության հնարավորությունները:

Ֆորումի հիմնական խորագիրն ընդգրկել է էներգետիկ անցման և կանաչ զարգացման փոխկապակցված ուղղությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը –

Ֆորումի բացման արարողությանը բացման խոսքով հանդես եկավ Շանսի նահանգի ղեկավար Լու Դոնգլիանգը: Այնուհետև ելույթ ունեցան Չինաստանի՝ կլիմայի փոփոխության հարցերով հատուկ բանագնաց Լյու Ժենմինը, Չինաստանի Կոմունիստական կուսակցության Շանսի նահանգային կոմիտեի քարտուղար Տանգ Դենջյենը, Էներգետիկայի ազգային վարչության ղեկավարի տեղակալ Սոնգ Հոնգկունը, ինչպես նաև ֆորումի պատվավոր հյուր, Սամոայի փոխվարչապետ Ալե Մոլինոն:

Ֆորումի երկրորդ հատվածում ելույթ ունեցավ Շանսի նահանգի ղեկավարի տեղակալ Դոնգ Շյայոուն: Այնուհետև առանձին ելույթներով և զեկույցներով հանդես եկան Չինաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ն.Գ. Պիտեր Ուիլսոնը, Չինաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ստիվեն Ջեքսոնը, Շանհայի համագործակցության կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ Տ.Ռ. Միդհունը, Կոլումբիայի Բոյակայի դեպարտամենտի ժողովի նախագահ Դավիդ Գարսիան, Չինաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոսներ Լյու Ժինշենը և Վոնգ Գուոֆանը, ինչպես նաև Չինաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բայ Չունլին:

Ֆորումը շարունակվեց «Տեսլա» ընկերության համաշխարհային փոխնախագահ Գրեյս Տաոյի և «Հուավեյ» ընկերության փոխնախագահ, նավթարդյունաբերության, գազի և հանքարդյունաբերության ոլորտների գլխավոր տնօրեն Ջիանգ Ուանչենգի ելույթներով և եզրափակվեց Շանսի նահանգի ղեկավարի տեղակալ Շու Չաուֆենգի ելույթով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը –

Ֆորումի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել Շանսի նահանգի Յունչենգ քաղաքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի հետ նախկինում ունեցած կապերի վերականգնման հնարավորությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ջանքեր գործադրել երկու քաղաքների միջև բարեկամական կապերի հաստատման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանները, ակնկալվող արդյունքները –

Առաջարկվել է ամրապնդել Լոռու մարզի և Շանսի նահանգի միջև ձևավորված երկարամյա համագործակցությունը, ինչպես նաև գտնել համագործակցության եզրեր երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Առաջարկվել է երկու երկրների արտաքին գործերի գերատեսչությունների միջնորդությամբ վերականգնել Ստեփանավան և Յունչենգ քաղաքների միջև քույր քաղաքային հարաբերությունները՝ համապատասխան փաստաթղթերի կնքման միջոցով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

10"09"2026թ"